ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-21/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «17» օգոստոսի 2021թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Կ.Մանուկյան, Ն.Մուխսյան,

Բացող անդամներ՝ Ա.Ղուրշուդյան, Ա.Բոշյան

Քարտուղար՝ Ս.Մելքոնյան

<u>ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-21/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի բացման մասին</u>

Գ.Բոշյան

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 4 (չորս) մասնակից՝

N	***Մասնակցի անվանումը***	***Մասնակցի հասցեն, էլ. հասցեն***
1	«Արման-Թաման» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Կարմիրգյուղ, mouradmo@mail.ru
2	«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ	ք.Գավառ,Գ.Միքայելյան 19 gexarquniqnairi@mail.ru
3	«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ	ք.Վանաձոր, Մաշտոցի փ.8/1, koshtoyansamvel@gmail.com
4	«Վոլմ Քոմփանի» ՍՊԸ	ք.Երևան, Նոր Արեշ 14-րդ փ., 38ա, 50 wolmcompany@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2) Ուսումնասիրելով 17/08/2021 թվականին ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-21/8 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները պարզ դարձավ, որ **«Վոլմ Քոմփանի» ՍՊԸ-ն /չունի նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր, որը պահանջվել է հրավերի 2.4 կետով/** և **«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ն /աշխատանքային ռեսուրսները չեն բավարարում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև նմանատիպ պայմանագրերը էլ համարվում են ոչ համապատասխան, քանի որ պայմանագրերի կնքման, հաշվի դուրս գրման և հանձման-ընդունման ակտերը կատարվել են նույն օրերում/** ներկայացրած հայտերը չեն համապատասխանում հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով ՀՀ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ մասը՝ մերժել «Վոլմ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը:

Ելնելով վերը նշվածներից, պարզ է դառնում, որ հետևյալ չափաբաժնի մասով ներկայացվել են հավասար գներ՝

- 6-րդ չափաբաժնի մասով /Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից տարածքի կապիտալ վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ / («Արման-Թաման» ՍՊԸ և «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3) Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասը և ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-21/8 ծածկագրով հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.7 կետը հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը՝ մասնակիցների միջև միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով: Մասնակիցների միջև բանակցությունների վարման արդյունքնում գնային առաջարկները ներկայացնել մինչև սույն թվականի օգոստոսի 24-ը, ժամը 16:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի օգոստոսի 24-ին, ժամը 16:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Կ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
		Ա.ԲՈՇՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ